ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		04.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ**		30.04.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմաչյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		30.04.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Սարգսյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		30.04.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		30.04.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	**Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ**		30.04.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	**Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ**		30.04.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	**Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ**		30.04.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կառավարման մարմինների 2018 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԷԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. ընթացքում տեղի են ունեցել փոփոխություններ Բանկի ղեկավար անձանց կազմում: Մասնավորապես, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ԲԺ 0201-Ν 01Ա որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամ Բարսեղ Բեգլարյանի լիազորությունները, ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 2018 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 1/753Ա որոշմամբ վերսկսվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամի պաշտոնում Նարեկ Բեգլարյանի գրանցման կասեցված ժամկետը և գրանցվել է ղեկավարների կազմում կատարված փոփոխությունը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 13/01Ա որոշմամբ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի նախագահ է ընտրվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամ Արզիկ Սուվարյանը:

Նշված հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել Բանկի 2018 թվականի ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական ընկերության եզրակացությունը:

Փաստեր, ցուցանիշներ

+3.9%	2018 թվականի վերջին ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 220.8 մլրդ ՀՀ դրամ, որը 2017 թվականի համեմատ աճել է 3.93%-ով:
+0.68%	2018 թվականի վերջին հաճախորդներին տրված վարկերի մեծությունը կազմել է մոտ 120 մլրդ ՀՀ դրամ, որը 2017 թվականի համեմատ աճել է 0.68%-ով:
+4.85%	2018 թվականի վերջին Բանկի ընդհանուր պարտավորությունների մեծությունը կազմել է 185.9 մլրդ ՀՀ դրամ, որը 2017 թվականի համեմատ աճել է 4.85%-ով:
-74.3%	2018 թվականի վերջին զուտ շահույթը կազմել է 514.8 մլն ՀՀ դրամ, որը 2017 թվականի համեմատ նվազել է 74.3%-ով:
-0.69%	2018 թվականի վերջին Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը կազմել է 34.9 մլրդ ՀՀ դրամ, որը 2017 թվականի համեմատ նվազել է 0.69%-ով:
	2018 թվականի ընթացքում բացվել է 1 մասնաճյուղ, դադարեցվել է 1 մասնաճյուղի գործունեությունը: Տարեվերջի դրությամբ Բանկի տարածքային ցանցն ընդգրկել է 61 մասնաճյուղ:

Ֆինանսական ակնարկ

2018 թվականին Բանկը, օգտագործելով իր կողմից կիրառվող բանկային նորագույն տեխնոլոգիաները, ունենալով արհեստավարժ աշխատակիցների թիմ, ապահովեց բանկային համակարգում աճող մրցակցության պայմաններում կարողացավ գրանցել ցուցանիշների բարենպաստ դինամիկա, ինչը վկայում է Բանկի գործունեության կայունության, արդյունավետության և ստեղծված իրավիճակում Բանկի կողմից ճիշտ ռազմավարության ընտրության փաստը:

Բանկի եկամուտներ և ծախսերը

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 15.8 մլրդ ՀՀ դրամ՝ նվազելով 1.5%-ով կամ 239.9 մլն ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի գծով ստացված տոկոսային եկամուտների՝ 550.7 մլն ՀՀ դրամով կամ 4.3%-ով նվազմամբ:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքում հաճախորդներին տրամադրված վարկերից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 77.3% նախորդ տարվա 79.6%-ի համեմատ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը՝ 15.5% նախորդ տարվա 14.9%-ի համեմատ, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 5.5% նախորդ տարվա 3.5%-ի համեմատ: Արդյունքում 2018 թվականին տոկոսային և նմանատիպ եկամուտներն ունեցել են առավել դիվերսիֆիկացված կառուցվածք:

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 8.9 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 4.63%-ով կամ 392.4 մլն ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ ծախսերի աճը պայմանավորված է այլ փոխառությունների դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 1.7 մլրդ ՀՀ դրամ կամ 53.6%, ռեպո գործառնությունների գծով կատարված տոկոսային ծախսերի 73.1 մլն ՀՀ դրամ կամ 126.2%, բանկի կողմից թողարկված պարտատոմսերի դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 450 մլն ՀՀ դրամ կամ 135.8% և բանկերից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 13.9 մլն ՀՀ դրամ կամ 9.5%-ով ավելացմամբ: Միևնույն ժամանակ, գրանցվել է հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների դիմաց վճարված տոկոսային ծախսերի նվազում՝ 1.9 մլրդ ՀՀ դրամ կամ 39%-ով:

2018 թվականին Բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են մոտ 7 մլրդ ՀՀ դրամ՝ 2017թ. համեմատ նվազելով 632 մլն ՀՀ դրամով (8.3%-ով):

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 1.6 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 13.4%-ով կամ 185.3 մլն ՀՀ դրամով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների աճը պայմանավորված է վճարահաշվարկային ծառայություններից ստացված կոմիսիոն եկամուտների՝ 123.4 մլն ՀՀ դրամ կամ 13.2%, պլաստիկ քարտերի սպասարկումից ստացված կոմիսիոն եկամուտների՝ 56.4 մլն ՀՀ դրամ կամ 13.1% և երաշխիքների և ակրեդիտիվների գծով ստացված կոմիսիոն եկամուտների 5.4 մլն ՀՀ դրամ կամ 43.5% աճով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 818.5 մլն ՀՀ դրամ՝ աճելով 10.1%-ով կամ 74.8 մլն ՀՀ դրամով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերի աճը պայմանավորված է պլաստիկ քարտերով իրականացված գործառնությունների համար վճարված կոմիսիոն վճարների 79.9 մլն ՀՀ դրամ կամ 14.4% և վճարահաշվարկային ծառայությունների դիմաց վճարված կոմիսիոն վճարների 17.5 մլն ՀՀ դրամ կամ 12.7% աճով: Ֆոնդային բորսայի ծառայությունների դիմաց վճարված կոմիսիոն վճարները նույն ժամանակահատվածում նվազել են 12.8 մլն ՀՀ դրամով կամ 40.4%-ով, իսկ երաշխիքների գծով կոմիսիոն վճարները նվազել են 9.9 մլն ՀՀ դրամով կամ 49.8%-ով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերի համեմատ Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների աճի առաջանցիկ տեմպի արդյունքում 2018 թվականին աճել են Բանկի

կողմից ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները 110.5 մլն ՀՀ դրամով կամ 17.4%-ով:

Ոչ տոկոսային եկամուտների աճին նպաստել են Բանկի կողմից մատուցվող մի շարք ծառայությունների, մասնավորապես՝ արտարժույթի առք ու վաճառքի, արժեթղթերով գործառնությունների, այլ ընկերությունների պարտատոմսերի տեղաբաշխման գործարքների, արագ դրամական փոխանցումների, կոմունալ վճարումների, ապահովագրական պոլիսների վաճառքի, տրանսպորտային պոլիսների վաճառքի, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների վաճառքի ցուցանիշների գծով գրանցած աճը:

Հաշվետու տարվա ընթացքում մասնաճյուղային ցանցի ընդլայնման և Բանկի աշխատողների թվաքանակի ավելացման, ինչպես նաև Բանկի աշխատողների աշխատավարձերի բարձրացման հետևանքով անձնակազմի գծով կատարված ծախսերը կազմել են մոտ 3.4 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 5.6%-ով կամ 184.6 մլն ՀՀ դրամով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Բանկի եկամուտների և ծախսերի դինամիկան նախորդ երկու տարիների կտրվածքով

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	15,814,734	16,054,673
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(8,860,575)	(8,468,210)
Զուտ տոկոսային եկամուտներ	6,954,159	7,586,463
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,565,536	1,380,266
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(818,476)	(743,711)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	747,060	636,555
Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	1,267,106	1,004,975
Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով զուտ վնաս	(303,443)	(78,917)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ	-	687,645
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման արդյունքում զուտ օգուտ	273,233	-
Այլ գործառնական զուտ եկամուտներ	341,182	197,047
(Արժեզրկման ծախս)/ հակադարձում	390,783	(704,196)
Անձնակազմի գծով ծախսեր	(3,472,922)	(3,288,348)
Գուդվիլի արժեզրկում	(2,510,864)	(880,871)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(647,551)	(687,095)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,850,655)	(1,850,775)
Շահույթ մինչև հարկումը	1,188,088	2,622,483

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Շահութահարկի գծով ծախս	(673,284)	(618,097)
Տարվա շահույթ	514,804	2,004,386

Բանկի ակտիվներ

2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 220.8 մլրդ ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 3.9%-ով (8.4 մլրդ ՀՀ դրամով):

Այդ թվում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հաճախորդներին տրված վարկերը և այլ փոխատվություններն աճել են 0.68%-ով (811.2 մլն ՀՀ դրամով), Ներդրումային արժեթղթերի ծավալները նվազել են 0.18%-ով կամ 53.4 մլն ՀՀ դրամով, Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներն աճել են 36.3%-ով (4,5 մլրդ ՀՀ դրամով), Դրամական միջոցները և դրանց համարժեքներն աճել են 1.5%-ով (589 մլն ՀՀ դրամով), Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները կրճատվել են 0.38%-ով (21.7 մլն. ՀՀ դրամով) և Այլ ակտիվներն աճել են 27.4%-ով (597.4 մլն ՀՀ դրամով):

2018թ տարեկան արդյունքներով Բանկի ընդհանուր ակտիվների կազմում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 75.2%.

հազ. ՀՀ դրամ	31.12.2018	31.12.2017	Փոփոխություն	%
Ակտիվներ, այդ թվում՝	**220,828,484**	**212,469,962**	***8,358,522***	***3.9%***
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	**166,100,764**	***160,831,103***	***5,269,661***	***3.3%***
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	*119,978,388*	*119,167,143*	*811,245*	*0.7%*
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	*16,937,582*	*12,425,722*	*4,511,860*	*36.3%*
Ներդրումային արժեթղթեր	*29,184,794*	*29,238,238*	*-53,444*	*0.2%*
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	***75.2%***	***75.70%***	-	

Ստորև բերված գծապատկերներում ներկայացված են նախորդ տասներկու տարիների ընթացքում արձանագրված ակտիվների փոփոխությունը և հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների կառուցվածքը.





Բանկի վարկային պորտֆելը

2018 թվականի ընթացքում ապահովվել է հաճախորդներին տրված վարկերի ծավալների բնականոն աճ՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդները կազմելով մոտ 120 մլրդ ՀՀ դրամ: 2017թ ցուցանիշի համեմատ աճը կազմել է 0.68% (811.2 մլն. ՀՀ դրամ): Ընդ որում՝ աճել է Բանկի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմելով մոտ 17.3 մլրդ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 16.4 մլրդ ՀՀ դրամի դիմաց (աճը՝ 5.5%): Աճ է գրանցվել նաև գյուղատնտեսության և այլ ոլորտների վարկավորման մասով՝ համապատասխանաբար 22%-ով և 35%-ով: Միաժամանակ, 2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ սպառողական վարկերի պորտֆելը կազմել է 22.3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 23 մլրդ ՀՀ դրամի դիմաց (նվազումը՝ 3%): Առևտրի ֆինանսավորման վարկերը 2018թ. վերջին կազմել են 22.4 մլրդ դրամ, իսկ արդյունաբերության ոլորտի վարկերը՝ 16.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով համապատասխանաբար 7.1% և 20.0%-

ով: 2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի շինարարության ոլորտ վարկերի պորտֆելը կազմել է 9.7 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 10.9 մլրդ ՀՀ դրամի դիմաց (նվազումը՝ 13.8%):

Բանկի վարկային պորտֆելի՝ վերջին տասներկու տարիներին փոփոխման դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում.

Հաճախորդներին տրամադրված վարկեր
2007-2018թթ. , մլրդ ՀՀ դրամ



Միջազգային վարկային ծրագրերը

Բանկի ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը:

2018 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Բանկն ակտիվորեն համագործակցում է 14 միջազգային կազմակերպությունների հետ՝ Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպության (DEG), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի, Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), Green for Growth Fund Հիմնադրամի, Incofin Investment Management, responsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, The OPEC Fund for International Development (OFID), Եվրասիական Զարգացման Բանկի (EDB), SYMBIOTICS SICAV ընկերության, ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ երրորդ անգամ «Global Finance» միջազգային հեղինակավոր ամսագրի մասնագիտական թիմի կողմից ճանաչվել է «Առևտրի լավագույն ֆինանսավորող» բանկը Հայաստանում: 2018թ.-ի «Առևտրի լավագույն ֆինանսավորող» բանկ պատվավոր մրցանակը ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻՆ շնորհվել է, հաշվի առնելով բանկում նորարարական թվային տեխնոլոգիաների ներդրումը, իրականացված գործարքների ծավալը, ճշգրտությունն ու

արագությունը, աշխարհագրական ընդգրկման շրջանակը, հաճախորդների սպասարկման բարձր մակարդակը:

Բանկի արժեթղթերի պորտֆելը

2018 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց ակտիվ գործունեությունը արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ: Բանկը 2018թ.-ին ներդրումային բանկային ծառայությունների սեգմենտում իր հաճախորդներին ներկայացել է առավել ընդգրկուն, բարձրորակ ծառայություններով՝ ամրապնդելով իր կայուն դիրքն այս ոլորտում: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը այլ ընկերությունների համար հաջողությամբ իրականացրել է կորպորատիվ պարտատոմսերի թվով 2 երաշխավորված տեղաբաշխումներ, ներդրումային պայուսակների վաճառք, թողարկողների արժեթղթերի ռեեստրի և հաշիվների վարումներ, ներդրել է ARARATBANK TRADING PLATFORM ինտերնետային նոր հավելվածը:

2018 թվականի վերջի դրությամբ արժեթղթերում Բանկի ներդրումային պորտֆելը կազմեց 29.2 մլրդ ՀՀ դրամ, որի կազմում 75.5%-ը ՀՀ պետական պարտատոմսերն են, 24.2%-ը՝ ոչ պետական պարտատոմսերը, իսկ 0.3%-ը՝ բաժնետոմսերը:

Բանկի արժեթղթերի պորտֆելն ըստ տեսակների 2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ, մլն ՀՀ դրամ



2018 թվականին Բանկի կողմից արժեթղթերի առաջնային շուկայում կատարված գործառնությունների ծավալը կազմեց 51.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ 168.0 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերը

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, կարևորելով տնտեսության ֆինանսական հատվածում արժեթղթերի և կապիտալի զարգացած շուկա ունենալու դերը և նշանակությունը, շարունակեց իր ներդրումն ունենալ արժեթղթերի շուկայի ակտիվացման և զարգացման գործում:

2018 թվականի ընթացքում Բանկը թողարկեց և ամբողջությամբ տեղաբաշխեց՝

- ✓ 8,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 320,000 հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 5.25% եկամտաբերությամբ, 51 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

- ✓ 3,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 120,000 հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 5.25% եկամտաբերությամբ, 51 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:
- ✓ 1,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 100,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 9.5% եկամտաբերությամբ 36 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

2018թ վերջի դրությամբ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կորպորատիվ պարտատոմսերի երկրորդային՝ Bbond հարթակում գնանշվել են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից 11-րդ, 13-րդ և 14-րդ թողարկման ընդհանուր 7 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերը, իսկ Abond հարթակում՝ 15-րդ, 17-րդ, 18-րդ թողարկման 16 մլն ԱՄՆ դոլար և 16-րդ, 19-րդ թողարկման 2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերը:

2018թ ընթացքում պարտատոմսերի երկրորդային շուկայում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկված կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերով իրականացվել է 150 գործարք՝ ընդհանուր 5,263 հազ ԱՄՆ դոլար և 23 մլն ՀՀ դրամ շրջանառության ծավալով:

Հաշվետու տարվա վերջում թողարկված պարտատոմսերի դիմաց Բանկի պարտավորությունը կազմում է 13.2 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 51.8%-ով կամ 4.5 մլրդ ՀՀ դրամով:

Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերը

Ներդրումային բանկային ծառայությունների մատուցման շրջանակներում 2018թ. Բանկի կողմից տեղաբաշխվել են հետևյալ ընկերությունների թողարկումները՝

- «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ՝ 3.0 մլրդ ՀՀ դրամ ծավալով դրամային պարտատոմսեր,
- Ֆինքա ՈՒՎԿ՝ 1,4 մլրդ ՀՀ դրամ ծավալով դրամային պարտատոմսեր:

Բանկի արտարժույթի առքուվաճառքի գործառնությունները

Տարվա ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել արտարժութային գործառնություններում: Արտարժութային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմեցին.

- ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 391.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 9.2%-ով
- ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 59.9 տրլն ՌԴ ռուբլի՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 5.2%-ով
- Եվրոյով գործարքների ծավալը՝ 843.7 մլրդ Եվրո՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 194.3%-ով:

2018թ արտարժույթի առքուվաճառքից ստացված զուտ եկամուտը կազմեց 966.9 մլն ՀՀ դրամ:

Բանկի որդեգրած՝ դեպի հաճախորդն ուղղված քաղաքականության ներքո Բանկը շարունակեց մրցակցային գնանշումներ իրականացնել արտարժութային շուկայում:

Բանկի կողմից հաճախորդներին է առաջարկվում ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳ համակարգը, որը հնարավորություն է տալիս անկախ գտնվելու վայրից, առանց ժամանակի կորստի համակարգչով կամ ուղղակի բջջային հեռախոսով իրականացնել արտարժույթի առք ու վաճառքի ցանկացած գործառնություն ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ կողմից սահմանված գնանշումների հիման վրա՝ բանկում գործող ՀՀ դրամով և արտարժույթով հաշիվների մնացորդների սահմաններում: 2018թ ընթացքում լրամշակված ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳ բազմաֆունկցիոնալ համակարգն իր բոլոր հաճախորդներին առաջարկում է մրցակցային փոխարժեքներ, ինչպես նաև հնարավորություն՝ ծանոթանալու ֆինանսական նորությունների, էլեկտրոնային գործիքների միջոցով աշխատել ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳ համակարգին միացած այլ հաճախորդների հետ:

Միջբանկային վարկերը

Աշխարհաքաղաքական ստեղծված զարգացումների և տնտեսության համակարգային բարձր ռիսկերի պայմաններում Բանկը պահպանել է միջոցների տեղաբաշխման զգուշավոր քաղաքականությունը՝ միջոցները տեղաբաշխելով առավել ցածր ռիսկային և բարձր իրացվելի գործիքներում, այդ թվում՝ միջբանկային վարկերում:

2018թ ընթացքում Բանկն իրականացրել է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների վարկավորում՝ ընդհանուր 4.6 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով:

Բանկի պարտավորություններ

2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 185.9 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.85%-ով կամ 8.6 մլրդ. ՀՀ դրամով:

Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների աճը պայմանավորված է Բանկերի նկատմամբ պարտավորությունների 68% կամ 2.5 մլրդ ՀՀ դրամ, Ածանցյալ ֆինանսական պարտավորությունների 3.7 անգամ կամ 8.7 մլն ՀՀ դրամ, Թողարկված պարտքային արժեթղթերի 51.8% կամ 4.5 մլրդ ՀՀ դրամ, Այլ փոխառություններ հոդվածի գծով 22% կամ 14.7 մլրդ ՀՀ դրամ աճով: 2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատ նվազել են 15.6%-ով կամ 15 մլրդ ՀՀ դրամով, իսկ Այլ պարտավորությունների մասով նույն ժամանակահատվածում գրանցվել է նվազում՝ 2.8%-ով կամ 51.5 մլն ՀՀ դրամով:

Տարեվերջին Բանկի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 75 մլրդ ՀՀ դրամ կամ պարտավորությունների 40.3%-ը: Բանկի համար մշտապես առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը:

Պարտավորությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները՝ 43.5% կամ 80.9 մլրդ դրամ, որոնք իրենց մեջ ներառում են իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները, ՀՀ կառավարության և տեղական ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվները, ավանդները և փոխառությունները:

Հաճախորդների ընթացիկ հաշիվներում և ավանդներում նախորդ ֆինանսական տարվա համեմատ նվազել են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները՝ համապատասխանաբար 14% և 29.8%-ով կամ 5.2 մլրդ և 2.9 մլրդ ՀՀ դրամով: Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ ավանդները նույն ժամանակահատվածում նվազել են համապատասխանաբար 1.4% և 5.1%-ով կամ 237.1 մլն և 1.4 մլրդ ՀՀ դրամով: ՀՀ կառավարության և պետական հիմնարկների միջոցները 2017թ դեկտեմբերի 31-ի համեմատ նվազել են 91%–ով կամ 5.3 մլրդ ՀՀ դրամով:

Բանկի ընդհանուր պարտավորությունների դինամիկան վերջին տասներկու տարիների ընթացքում պատկերված է ստորև.



Բանկի սեփական կապիտալ

2018թ. վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 34.9 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է 244 մլն ՀՀ դրամով կամ 0.7%-ով: Նախորդ տարվա համեմատ Բանկի ընդհանուր կապիտալի նվազումը հիմնականում պայմանավորված է IFRS 9 ստանդարտների ներդրման հետևանքով 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Բանկի սեփական կապիտալի 426.5 մլն ՀՀ դրամ չափով նվազման ուղղությամբ ճշգրտումով:

Բանկի սեփական կապիտալի փոփոխությունն ըստ տարիների արտացոլված է ստորև.



2018թ կապիտալի նվազման արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 19,828 ՀՀ դրամ՝ 2017թ ցուցանիշի համեմատ նվազելով մոտ 0.7%-ով՝ 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքի պարագայում:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի դինամիկան 2010-2018թթ ընթացքում պատկերված է ստորև բերված գծապատկերում.



Հիմնական ֆինանսական ցուցանիշներ

Շահութաբերության գործակիցներ և շահաբաժիններ

Հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 514.8 մլն ՀՀ դրամ:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.

Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 1.47%,

Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 0.24%:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 292.4 ՀՀ դրամ:

Բանկի մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը տարեվերջի դրությամբ կազմել է 19,828 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 5,000 ՀՀ դրամ: Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշի հարաբերակցությունը կազմել է 67.8:

2018 թվականին Բանկի կողմից բաժնետերերին շահաբաժիններ չեն վճարվել:

Ներքին հսկողական համակարգ

Ներքին հսկողության համակարգը Բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է:

Բանկի ներքին հսկողության համակարգի գլխավոր նպատակը Բանկի գործունեության ու որոշումների կայացման գործընթացների նկատմամբ արդյունավետ հսկողության ապահովումն է:

Այդ, իսկ նպատակով Բանկում ներդրված է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ և հսկողական գործառույթներ, այդ թվում՝ ռիսկերի գնահատման հիման վրա բանկի Ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման, աուդիտի իրականացման և հետստուգումային հսկողության (Follow up) գործառույթ:

Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան Բանկում ներդրված Ներքին աուդիտի գործառույթն ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված Բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Նշված ներքո հաշվետու տարվա ընթացքում Ներքին աուդիտի կողմից՝ Տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն իրականացվել են ռիսկերի վրա հիմնված Բանկի տարբեր գործարար գործընթացների, տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համալիր ու նպատակային ստուգումներ և ուսումնասիրություններ:

Ստուգումների և ուսումնասիրությունների նպատակն է եղել Ներքին աուդիտի կողմից գնահատելու բանկում ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը:

Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

2018 թ.-ի ընթացքում Բանկում բարելավվել է գործառնական ռիսկի կառավարման համակարգը, վերանայվել են իրացվելիության ռիսկի կառավարման ցուցանիշները և վարկային ռիսկի կենտրոնացումների կառավարման համակարգը, ներդրվել է երկրի ռիսկի սթրես թեստավորման համակարգը, վարկային ռիսկի նվազեցման նպատակով բարելավվել է վարկերի մոնիթորինգների գործընթացը՝ բարձրացնելով մոնիտորինգների որակը և ավելացնելով իրականացվող մոնիտորինգների քանակը: Իրականացված միջոցառումների արդյունքում ստեղծվել և գործում է նաև Գործարար գործընթացների կառավարման հանձնաժողովը

Վճարահաշվարկային գործառնություններ

Բանկը հաճախորդների դրամական փոխանցումների սպասարկման որակը բարձրացնելու և գործընթացը դյուրացնելու նպատակով շարունակել է զարգացնել համագործակցությունը Unistream, MoneyGram, Ria Money Transfer, Xpress Money, Intel Express, MoneyTun և Converse Transfer արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ՝ նորանոր անակնկալներ մատուցելով հաճախորդներին և տարվա ընթացքում երեք անգամ պարգևատրվելով միջազգային արագ դրամական փոխանցումների բարձրակարգ սպասարկման համար:

Արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ համագործակցության շրջանակներում Բանկի հաճախորդները հնարավորություն ստացան օգտվելու վերջիններիս կողմից կատարվող լավագույն առաջարկներից և ակցիաներից:

Համագործակցության խորացման արդյունքում Բանկը հաշվետու տարում կարողացավ հաճախորդներին առաջարկել մատչելի սպասարկման սակագներ՝ շուկայում ապահովելով մրցակցային կայուն դիրքեր:

Բանկի կողմից առաջարկվող արագ դրամական փոխանցումների տարբեր համակարգերի լայն ընտրության շնորհիվ մեր հաճախորդները ներկայում հնարավորություն ունեն փոխանցումներ կատարելու և ստանալու փոխանցումներ աշխարհի ցանկացած երկրից, որտեղ գործում են արագ դրամական փոխանցումների համակարգեր:

Արագ դրամական փոխանցումներից օգտվող հաճախորդների շրջանում աճեց նաև բանկի ARARATTRANSFER ակումբի անդամների թիվը: ARARATTRANSFER բոնուսային ծրագրի շրջանակներում միջազգային արագ դրամական փոխանցումներից օգտվող առավել ակտիվ հաճախորդներին առաջարկվում են մի շարք արտոնություններ, այդ թվում՝ զեղչեր փոխանցումներ իրականացնելիս, անհատական պահատեղերից օգտվելիս, արտոնյալ փոխարժեք և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի քարտապաններին առաջարկվող զեղչային համակարգից օգտվելու հնարավորություն:

Բանկում կիրառվող մրցունակ սակագների և սպասարկման բարձր որակի շնորհիվ 2018թ ապահովվել է SWIFT համակարգով փոխանցումների ծավալի աճ, ներգրավվել են նոր հաճախորդներ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ SWIFT փոխանցումների բարձր որակ ապահովելու համար հինգերորդ անգամ արժանացել է ավստրիական Raiffeisen Bank International AG-ի «Որակի գերազանցություն» /STP Quality Award / մրցանակին:

2018թ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ դրամական փոխանցումների բարձր որակն ապահովել է փոխանցումների արագ մշակման ավտոմատ համակարգի կատարելագործման և առավելագույն կարճ ժամկետում փոխանցումները շահառուներին հասանելի դարձնելու շնորհիվ:

Պլաստիկ քարտեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ թողարկում և սպասարկում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հեղինակավոր վճարահաշվարկային համակարգերի քարտեր: Բանկը հանդիսանում է

Արմենիան քարդ ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ, “MasterCard” վճարային համակարգի աֆիլիատ անդամ և “VISA International”վճարային համակարգի լիիրավ անդամ:

2018թ Բանկն ակտիվորեն շարունակեց բանկային համակարգում պլաստիկ քարտերի թողարկման ծավալների ավելացման, ձեռք բերված դիրքերի պահպանման և ամրապնդման միջոցառումներն ու քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների վերաբերյալ հանրությանը տեղեկացման լայնածավալ աշխատանքները: Մասնավորապես՝

- 2018 թվականին ընդլայնվեց Բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը՝ հասնելով 2,229-ի:
- Զարգացվեց և ընդլայնվեց քարտերի սպասարկման ենթակառուցվածքը: Հաշվետու տարվա վերջի դրությամբ ավտոմատ գանձման մեքենաների քանակը կազմեց 126 հատ, POS տերմինալների քանակը՝ 1,925 հատ:

2018թ վերջի դրությամբ Բանկի թողարկած վճարային քարտերի կառուցվածքը՝ ըստ վճարային համակարգերի, ներկայացվում է ստորև.



Բանկը, թողարկած քարտերի քանակով, ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է Բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և նորարար ծրագրերի իրականացմամբ: 2018թ վերջի դրությամբ Բանկի կողմից թողարկված քարտերի քանակը կազմել է 145,364 հատ:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ինտեգրումը, էլեկտրոնային առևտրի ծավալների շարունակական աճը, անկանխիկ գործառնությունների տարածումը՝ Բանկն առանձնակի կարևոր է համարում շարունակաբար ավելացնել միջազգային պլաստիկ քարտերի (Visa, MasterCard) թողարկման ծավալները, ինչպես նաև, օգտագործելով Բանկի՝ Հայաստանում Diners Club միջազգային վճարային համակարգի բացառիկ ներկայացուցիչը լինելու հանգամանքը, Բանկը շարունակելու է իրականացնել բազմատեսակ ծրագեր՝ հանրությանն առավելագույնս իրազեկում Diners Club քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների մասին:

Բանկին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Բանկը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում՝ վարկային, իրացվելիության, շուկայական, գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով բանկը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր:

Վարկային ռիսկը բանկի վարկառուների, փոխառուների և բանկի նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է ինչը կարող է վնաս հասցնել բանկի կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը բանկի կարևորագույն խնդիրներից է: Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Բանկը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը, ինչի արդյունքում խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում բավականին փոքր է:

Իրացվելիության ռիսկ, երբ Բանկի ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով Բանկի հնարավորություններն ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելը կդժվարանա, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու: Իրացվելիության ռիսկերի կառավարման նպատակով Բանկում ներդրվել են սահմանաչափերի պահպանման և ամենօրյա կտրվածքով հսկողության իրականացման մեխանիզմներ: Բանկում իրականացվում են ընթացիկ, կարճաժամկետ և երկարաժամկետ իրացվելիության ռիսկի կառավարում, իրացվելիության ճեղքվածքի և բացասական ազդեցության սցենարային վերլուծություններ:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել բանկի գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Բանկի կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Բանկը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Բանկի վնասներ կրելու հավանականությունը:

Գործառնական ռիսկը, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև բանկի համբավը: Գործառնական ռիսկերի գնահատման և մոնիտորինգի համար Բանկում գործում է ռիսկային պատահարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համակարգ:

Տոկոսադրույքի ռիսկ, որը ֆինանսական գործիքների տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում արժեքի փոփոխության ռիսկն է, որն էլ իր հերթին կարող է ազդել Բանկի զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Բանկի ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում կարող են ինչպես ավելացնել, այնպես էլ նվազեցնել տոկոսային մարժան, հանգեցնել վնասների: Բանկում տոկոսադրույքի Կառավարման նպատակով կիրառվում են բազիսային, եկամտաբերության կորի փոփոխության և ժամկետային անհամապատասխանության ռիսկերի գծով վերլուծություններ:

Արտարժույթի ռիսկ, որն իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկը: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Ելնելով ՀՀ-ում տնտեսական, քաղաքական զարգացումներից և հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ

կանոնակարգել է և խիստ հսկողություն է իրականացնում բանկերի նկատմամբ, նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ձգտում է նվազագույնի:

Բանկի աշխատակիցները

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ գործունեության հաջողությունը պայմանավորված է աշխատողների բարեխիղճ ու նպատակասլաց աշխատանքով, ուստի Բանկը մշտապես արժևորում է յուրաքանչյուր աշխատողի ներդրումը Բանկի զարգացման գործում:

Կարևորելով աշխատողների մասնագիտական և անձնական զարգացումը՝ Բանկն աշխատողների համար ստեղծում է հավասար հնարավորություններ յուրաքանչյուր աշխատողի ներդրման արդարացի գնահատման, նախաձեռնության խթանման, թիմի ձևավորման համար: Բանկի ղեկավարությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործման, առաջխաղացման և մոտիվացման գործընթացին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2018 թվականի ընթացքում, Բանկի ղեկավարությունն իր ուշադրության ներքո է պահել անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը, մոտիվացմանը (խրախուսման, առաջխաղացման և այլն) վերաբերող ցանկացած հարց:

ՀՀ բանկային համակարգում մրցունակ անձնակազմ ձևավորելու նպատակով Բանկը պարբերաբար վերանայում է անձնակազմի բնագավառը կարգավորող ներքին իրավական ակտերը, որոնցով ներդրվում են միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակված անձնակազմի հավաքագրման, մրցույթների կազմակերպման, վերապատրաստման և ատեստավորման համակարգեր: Նշված համակարգերը նպաստում են աշխատողների վերաբերյալ ընդունվող ցանկացած որոշման արդարության և թափանցիկության մակարդակի բարձրացմանը:

Բանկի ղեկավարությունը, գնահատելով աշխատողների մոտիվացման կարևորությունը, 2018թ ընթացքում շարունակեց իր լավագույն աշխատողների հրապարակային խրախուսման և մոտիվացման միջոցառումները:

Բանկում առանձնակի ուշադրություն է դարձվում նաև նոր ընդունվող աշխատողների մասնագիտական բարձր պատրաստվածությանը և նրանց համապատասխանությանը Բանկի ներքին բիզնես մշակույթին:

Այս ամենի արդյունքում Բանկի ամբողջ անձնակազմը պատրաստակամություն է ցուցաբերում Բանկի ղեկավարության կողմից առաջ քաշված խնդիրների կարգավորման, սահմանված նպատակների իրականացման, ինչպես նաև Բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ թիրախների ապահովման գործում:

Բանկի աշխատողի կերպարի հիմնական բնութագրիչ է դիտվում մասնագիտական գիտելիքների, ունակությունների, համապատասխան որակների և գործարար վարվելակերպի համարժեք զուգակցումը:

Բանկը, պահպանելով կառավարման դասական գործընթացները, միաժամանակ ներմուծում է կառավարման այնպիսի մոդելներ, որոնք նպատակաուղղված են կոլեկտիվի համախմբմանը՝ նրա նպատակների ու խնդիրների իրականացման գործում:

Անձնակազմի կառավարման գործառույթներում մեծացել է Balanced Scorecard /BSC/ կամ ցուցանիշների հաշվեկշռված համակարգի /ՑՀՀ/ ներդրման դերը, այն իրենից ներկայացնում է Բանկի աշխատողների թիրախային ցուցանիշների սահմանում և կանոնակարգում ինչպես առանձին աշխատողների, այնպես էլ ստորաբաժանումների մակարդակով:

Չնայած այն հանգամանքին, որ անձնակազմի համալրման և վարչական հարցերը շատ ժամանակատար են՝ Բանկի անձնակազմի կառավարման քաղաքականությունում առանձնակի կարևորություն և ուշադրություն է դարձվում տաղանդների կառավարմանը, թիմի մոտիվացմանը, Բանկին բնորոշ արժեքների համակարգի և կորպորատիվ մշակույթի ձևավորմանը:

31.12.2018թ դրությամբ Բանկի աշխատողների թիվը կազմել է 924 մարդ:

Տարածքային գործունեություն

Բանկը, մշտապես առաջնորդվելով իր հաճախորդի կողքին լինելու, խորհրդատվություն տրամադրելու, արդյունավետ և օպտիմալ լուծումներ առաջարկելու, գործունեության աշխարհագրության շարունակական ընդլայնման և զարգացման քաղաքականությամբ: 2018 թ.-ին ցածր արդյունավետությամբ մասնաճյուղերի գործունեության նպատակահարմարության գանահատման աշխատանքների արդյունքում փակվել է Խորենացի 1 մասնաճյուղը: 2018թ.-ի ընթացքում Բանկը նաև բացել է նոր Նուբարաշեն մասնաճյուղը՝ բանկային համակարգում պահպանելով 3-րդ հորիզոնականը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի մասնաճյուղերի թիվը կազմել է 61՝ 59-ը ՀՀ տարածքում և երկու մասնաճյուղ ԼՂՀ-ում: Բանկը 2018թ.-ի ընթացքում ներդրեց ԶԱՐԳԱՑՈՒՄ ֆինանսական սուպերմարկետը:

2018թ ընթացքում Բանկի գործող մասնաճյուղերում, կադրերի որակավորման բարձրացման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման նպատակով, միջոցներ են հատկացվել մի շարք մասնաճյուղերի կապիտալ վերանորոգման և տեխնիկական վերազինման համար, որի արդյունքում բարելավվել են Բանկի աշխատակազմի աշխատանքային, ինչպես նաև հաճախորդների սպասարկման պայմանները, նվազել է մեկ գործառույթի և մեկ հաճախորդի սպասարկման ժամանակի տևողությունը: Մասնաճյուղերում կադրերի որակավորման նպատակով՝ յուրաքանչյուր ամիս Բանկի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներ իրականացրել են համապատասխան սեմինար պարապմունքներ:

Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնման ծրագիրը կրելու է շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով ընդլայնել Բանկի գործունեության աշխարհագրությունը և մոտեցնել Բանկի սպասարկումն ու ծառայությունները հաճախորդների առավել լայն զանգվածի:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2018 թվական	2017 թվական
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	514,804	2,004,386
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,033,281	34,142,962
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE),%	**1.47%**	**5.87%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	514,804	2,004,386
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	216,649,223	180,834,325
Ակտիվների շահութաբերություն (ROA),%	**0.24%**	**1.11%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	514,804	2,004,386
Գործառնական եկամուտ[1]	9,309,507	9,425,040
Զուտ շահույթի մարժա (NPM), %	**5.53%**	**21.27%**
Գործառնական եկամուտ	9,309,507	9,425,040
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	216,649,223	180,834,325
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	**4.30%**	**5.21%**
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	216,649,223	180,834,325
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,033,281	34,142,962
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	**6.2**	**5.3**
Զուտ տոկոսային եկամուտ	6,954,159	7,586,463
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	163,465,934	133,578,551
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	**4.25%**	**5.68%**
Տոկոսային եկամուտ (ՏԵ)	15,814,734	16,054,673
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ)	163,465,934	133,578,551
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	**9.67%**	**12.02%**
Տոկոսային ծախսեր (ՏԾ)	8,860,575	8,468,210
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր (ՄԾՊ)	181,914,610	175,101,540
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	**4.87%**	**4.84%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	514,804	2,004,386
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	1,760,731	1,760,731
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	**0.29**	**1.14**
Սփրեդ (ՏԵ)/(ՄԵԱ) - (ՏԾ)/(ՄԾՊ)	**4.80%**	**7.18%**

1 Ներառում է զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները, ինչպես նաև ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարները:

Բանկի հետագա զարգացման նկարագիրը

Բանկի հեռանկարային զարգացումը միտված է Բանկի ցուցանիշների դինամիկ աճի ապահովմանը, հաճախորդներին հասանելի, նորարարական, շուկայում մրցունակ ծառայությունների մատուցմանն ու հավատարիմ հաճախորդների շրջանակի, որակյալ կադրային ներուժի պահպանմանը, միջազգային գործընկերների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Բանկը նպատակադրել է ինչպես ինտենսիվ, այնպես էլ էքստենսիվ աճ իր հիմնական ցուցանիշների և բանկային ծառայությունների բոլոր ուղղությունների գծով՝ ՀՀ ֆինանսաբանկային շուկայում առաջարկելով միջազգային լավագույն բանկային լուծումների և հաճախորդների արագ փոփոխվող կարքների վրա հիմնված ծառայություններ:

Այսպիսով, Բանկը առաջիկա ժամանակահատվածում բանկային համակարգում սուր մրցակցությանը դիմակայելու, իր կայուն ու վստահելի դիրքը պահպանելու և ֆինանսատնտեսական ցուցանիշների առաջանցիկ աճի ապահովմանն ուղղված նպատակադրել է զարգացման հետևյալ ռազմավարական առաջնահերթությունները.

1. Բոլոր բանկային ծառայությունների թվային տրանսֆորմացիա (Digital transformation),
2. Անձնակազմի զարգացում (ուշադրություն դարձնելով տաղանդների կառավարմանը),
3. Գործունեության արդյունավետության բարձրացում,
4. Վարկավորման ընդլայնում՝ մանրածախ, սպառողական վարկավորման հաշվին,
5. Ներդրումային ծառայությունների շրջանակի ընդլայնում,
6. Սպասարկման որակի բարելավում,
7. Հաճախորդների աճի ապահովում,
8. Վաճառքի նոր խողովակների զարգացում,
9. Բաժնետոմսերի առաջնային հանրային տեղաբաշխում, բաժնետերերի կազմի դիվերսիֆիկացիա,
10. Մոբայլ բանկինգի զարգացում:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2018թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ծանոթագրություն 1	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության (Բանկ) բաժնետերերին ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Բանկի 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա Բանկի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին՝ համաձայն Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Բանկի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2019թ. ապրիլի 15-ի մեր եզրակացությունում:

Եզրակացությունը պարունակում է նաև Աուդիտի առանցքային հարցեր, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը վերաբերվում են ՖՀՄՍ 9-ի առաջին անգամ կիրառմանը, համաձայն այդ

ստանդարտի ֆինանսական ակտիվների դասակարգմանը և արժեզրկումից կորուստների հաշվառմանը և գուդվիլի արժեզրկմանը: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտ անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքների համաձայն պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով 810 “Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ” ստանդարտին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա՝ արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

15 ապրիլի 2019թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2018	2017
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	15,814,734	16,054,673
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(8,860,575)	(8,468,210)
Զուտ տոկոսային եկամուտներ	6,954,159	7,586,463
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,565,536	1,380,266
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(818,476)	(743,711)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	747,060	636,555
Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	1,267,106	1,004,975
Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով զուտ վնաս	(303,443)	(78,917)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ	-	687,645
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման արդյունքում զուտ օգուտ	273,233	-
Այլ գործառնական զուտ եկամուտներ	341,182	197,047
Արժեզրկման (ծախս)/ հակադարձում	390,783	(704,196)
Անձնակազմի գծով ծախսեր	(3,472,922)	(3,288,348)
Գուդվիլի արժեզրկում	(2,510,864)	(880,871)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(647,551)	(687,095)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,850,655)	(1,850,775)
Շահույթ մինչև հարկումը	1,188,088	2,622,483
Շահութահարկի գծով ծախս	(673,284)	(618,097)
Տարվա շահույթ	514,804	2,004,386

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2018	2017
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում		
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)		
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում	(196,404)	-
Վերադասակարգում շահույթում կամ վնասում	(247,413)	-
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	22,695	-
Շահութահարկ	88,763	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով վնաս	(332,359)	-
Իրական արժեքի պահուստի շարժ (վաճառքի համար մատչելի)		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ	-	1,268,127
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	(1,242,734)
Շահութահարկ	-	(5,079)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով օգուտ	-	20,314
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	(332,359)	20,314
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	182,445	2,024,700
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ	0.29	1.14

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,633,475	38,044,426
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,071	21,534
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16,937,582	12,425,722
Ներդրումային արժեթղթեր		
- Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	-	29,238,238
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	29,184,794	-
- Հետգնման պայմանագրերով գրավադրված՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	4,175,959	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	119,978,388	119,167,143
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	5,667,894	5,689,632
Գուդվիլ	1,012,602	3,523,466
Հետաձգված հարկային ակտիվ	141,904	-
Բռնագանձված ակտիվներ	2,314,940	2,180,351
Այլ ակտիվներ	2,776,875	2,179,450
Ընդամենը՝ ակտիվներ	220,828,484	212,469,962

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	6,229,888	3,708,928
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	12,004	3,253
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	80,850,763	95,811,913
Այլ փոխառություններ	81,567,962	66,843,616
Թողարկված պարտքային արժեթղթեր	13,253,993	8,733,830
Ստորադաս փոխառություններ	1,990,079	-
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	238,796	269,316
Հետաձգված հարկային պարտավորություն	-	118,577
Այլ պարտավորություններ	1,773,749	1,825,217
Ընդամենը՝ պարտավորություններ	185,917,234	177,314,650
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	8,803,655	8,803,655
Էմիսիոն եկամուտ	8,031,745	8,031,745
Իրական արժեքի պահուստ	658,105	886,937
Չբաշխված շահույթ	17,417,745	17,432,975
Ընդամենը՝ սեփական կապիտալ	34,911,250	35,155,312
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	220,828,484	212,469,962

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Բանկի Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2019թ. ապրիլի 15-ին:

Աշոտ Օսիպյան
Վարչության նախագահ

Տիգրան Գալստյան
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Իրական արժեքի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,803,655	8,031,745	886,937	17,432,975	35,155,312
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը	-	-	103,527	(530,034)	(426,507)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	8,803,655	8,031,745	990,464	16,902,941	34,728,805
Տարվա շահույթ	-	-	-	514,804	514,804
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	(196,404)	-	(196,404)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների վաճառքից շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	-	(247,413)	-	(247,413)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	22,695	-	22,695
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	88,763	-	88,763
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(332,359)	514,804	182,445
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,803,655	8,031,745	658,105	17,417,745	34,911,250

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Իրական արժեքի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	8,803,655	8,031,745	866,623	15,428,589	33,130,612
Տարվա շահույթ	-	-	-	2,004,386	2,004,386
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	1,268,127	-	1,268,127
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ օգուտ	-	-	(1,242,734)	-	(1,242,734)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(5,079)	-	(5,079)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	20,314	2,004,386	2,024,700
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,803,655	8,031,745	886,937	17,432,975	35,155,312

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2018	2017
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	1,188,088	2,622,483
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	647,551	687,095
Գուդվիլի արժեզրկում	2,510,864	880,871
Արժեզրկումից կորուստներ/(հակադարձում)	(390,783)	704,196
Փոփոխություն ստացվելիք տոկոսներում	(56,937)	(378,145)
Փոփոխություն վճարվելիք տոկոսներում	259,143	686,886
Հիմնական միջոցների վաճառքներից զուտ վնաս	10,307	41,832
Այլ ակտիվների վաճառքից զուտ (օգուտ)/վնաս	50,906	(8,789)
Զուտ օգուտ ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(212,984)	(78,555)
Շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական ակտիվների իրական արժեքից զուտ վնաս	308,030	66,496
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	4,314,185	5,224,370
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Փոփոխություններ ածանցյալ գործիքներում	41,741	77,053
Փոփոխություններ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներում	(4,684,815)	1,150,623
Փոփոխություններ հաճախորդներին տրված վարկերում	(2,538,833)	(14,532,597)
Փոփոխություններ բռնագանձված ակտիվներում	1,234,636	427,118
Փոփոխություններ այլ ակտիվներում	(610,450)	(510,528)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Փոփոխություններ բանկերի նկատմամբ պարտավորություններում	4,120,688	(19,384)
Փոփոխություններ հաճախորդների նկատմամբ պարտավորություններում	(14,274,279)	(18,060,243)
Փոփոխություններ այլ պարտավորություններում	(77,945)	791,696
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շահութահարկը	(12,475,072)	(25,451,892)
Վճարված շահութահարկ	(768,894)	(408,922)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(13,243,966)	(25,860,814)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2018	2017
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք/(վաճառք)	(4,508,600)	3,790,154
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(636,136)	(1,119,857)
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	-	24,981
Բիզնեսի ձեռքբերումից դրամական հոսքեր	-	(2,634,938)
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(5,144,736)	60,340
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Պարտքային արժեթղթերի թողարկում	4,441,227	4,860,375
Փոխառությունների ստացում ֆինանսական կազմակերպություններից	12,899,741	19,960,460
Ստորադաս փոխառության ստացում	1,989,444	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	19,330,412	24,820,835
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	941,710	(979,639)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	38,044,426	38,617,733
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(351,267)	406,332
Ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	(1,394)	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ	38,633,475	38,044,426

Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	15,757,797	15,676,528
Վճարված տոկոսներ	(8,601,432)	(7,781,324)

Ծանոթագրություն 1

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունները, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսկանա արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը՝ քաղված «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ամբողջական ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը՝ կից ծանոթագրություններով, հասանելի է «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության պաշտոնական կայքում: